ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13 նոյեմբերի 2019թ.
Ժամը 10.00-ին

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Լիլիթ Ոսկանյանը՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ
Անդամներ՝
Նավասարդ Նավասարդյան՝ Ավտոպարկի և տեխնիկական միջոցների պատասխանատու/ինժեներ
Հրաչյա Համբարձումյան՝ SS մոնիտորինգի պատասխանատու
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

Տեղեկություն հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին.

1. Հիմք ընդունելով 07.11.2019թ. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը՝ բացառությամբ Ա/Ձ Գագիկ Ավագյանի, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով, և առաջարկել Ա/Ձ Գագիկ Ավագյանին վճարել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով իր կողմից ունեցած պարտավորությունները, որը կազմում է 351232 ՀՀ դրամ, և սահմանված կարգով տրամադրել գնահատող հանձնաժողովի քարտուղարին:

   Ա/Ձ Գագիկ Ավագյանի կողմից 07.11.2019թ.-12.11.2019թ. ընկած ժամանակահատվածում սահմանված կարգին համապատասխան ներկայացվել է գումարի վճարումը հիմնավորող փաստաթուղթը բնօրինակից արտատպված /սկանավորված/ տարբերակով:

   Վերոգրյալից ելնելով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով՝ հանձնաժողովը որոշեց ներկայացված հայտը գնահատել բավարար և 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Ռաֆիկ Պետրոսյան Ա/Ձ-ին, 1-ին, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով՝ Գագիկ Ավագյան Ա/Ձ-ին, 5-րդ չափաբաժնի մասով՝ Գոռ Մկրտչյան Ա/Ձ-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով՝ Մեխակ Շոլյան Ա/Ձ-ին, 9-րդ չափաբաժնի մասով՝ Աշոտ Ղազարյան Ա/Ձ-ին, 4-րդ և 10-րդ չափաբաժինների մասով՝ «Մաքրություն» ՍՊԸ-ին:
2. Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:
3. Հանձնաժողովը որոշեց էլ. Փոստի /easm.himnark@gmail.com/ միջոցով ծանուցել ընկերություններին ընտրված մասնակիցներ ճանաչվելու մասին և ներկայացնել պայմանագրերի նախագծերը, որոնք կկնքվեն ընտրված մասնակիցների կողմից պայմանագրերի ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Լ. Ոսկանյան

Անդամներ՝ Ն. Նավասարդյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան